

## ԵՊՀ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ 2015-2018 թթ. ՀԱՄԱԼԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

### Ներածություն

ԵՊՀ կոռուպցիոն ռիսկերի և երևույթների դեմ պայքարի 2015-2018 թթ. միջոցառումների ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) շարունակում և ընդլայնում է 2010 թ. մեկնարկած հակակոռուպցիոն բնույթ ունեցող ծրագրային միջոցառումները ԵՊՀ-ում: Ծրագրի հիմնական թիրախը կոռուպցիոն ռիսկերն են, իսկ գործողությունների առումով շեշտադրվում են ինչպես իրազեկվածության մակարդակը բարձրացնող և մասնակցային գործընթացները խթանող, այնպես էլ տարբեր ռիսկեր և երևույթներ կանխարգելող ու չեզոքացնող, դրանց նկատմամբ հսկողությունը խստացնող միջոցառումները:

Ծրագրում պահպանված են կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014 թթ. համալիր միջոցառումների ծրագրով նախանշված հիմնական կոռուպցիոն ռիսկերի խմբավորումը (գիտելիքի գնահատում, մուտք դեպի կրթական համակարգ, ուսանողի շարժունակություն, անձնակազմի կառավարում, ֆինանսական կառավարում, տնտեսական կառավարում):

Ծրագրով ներմուծվել են գործողությունների նոր ուղղություններ, մասնավորապես, շահերի բախման խնդիրը, կոռուպցիայի տարաբնույթ դրսևորումների վերաբերյալ խորքային ուսումնասիրությունների և հետազոտությունների խնդիրը, էթիկայի կանոնակարգը, կոռուպցիայի կանխարգելման հիմնախնդիրների դասավանդումը և այլն:

Ծրագրի արդյունավետ իրականացումը պահանջում է հակակոռուպցիոն գործիքակազմի ճշգրիտ ընտրություն, աշխատողների, ուսանողների և այլ շահառուների ակտիվ մասնակցություն, արդյունավետ ու համապարփակ միջոցառումների համալիր իրականացում՝ հնարավորինս ապահովելով հստակ, գնահատելի և իրատեսական արդյունքներ: Ինչպես նախորդ տարիների հակակոռուպցիոն ծրագրերի պարագայում, այնպես էլ ներկայիս ծրագրի դեպքում միջոցառումների շրջանակը ներառում է ուղղակի միջոցառումները (հակակոռուպցիոն խնդիրներին ուղղակիորեն առնչվող) և անուղղակի միջոցառումները (աշխատանքներ, որոնք իրականացվում են այլ հիմնախնդիրների լուծման նպատակով, սակայն միաժամանակ ունեն զգալի հակակոռուպցիոն ազդեցություն):

## 2010 թվականից մեկնարկած հակակոռուպցիոն ծրագրային միջոցառումները ԵՊՀ-ում

2010 թվականից ԵՊՀ-ում հակակոռուպցիոն միջոցառումները ձեռք են բերել առավել կանոնակարգված և ծրագրային բնույթ: Կոռուպցիոն երևույթների դեմ պայքարը ԵՊՀ-ում ստացել է առաջնային խնդրի կարգավիճակ և կարևորվում է համալսարանի ղեկավար մարմինների կողմից:

Անցած տարիների ընթացքում Երևանի պետական համալսարանը որդեգրել է կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականությունը և այն ամրագրել մի շարք ներքին իրավական ակտերում և փաստաթղթերում: Մասնավորապես, 2009 թ.-ի դեկտեմբերի 25-ին ԵՊՀ խորհրդի կողմից հաստատված «ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով (2010-2014 թթ.)» հակակոռուպցիոն միջոցառումները համարվել են գործունեության կարևոր ուղղություն: Ռազմավարական նպատակների և ընթացիկ գերակայությունների շարքում նախատեսված էր առանձին խնդիր՝ նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը, նպաստել համալսարանում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի հետագա զարգացմանը: Կրթության որակի բարձրացմանը, հանրային կապերի զարգացմանը, կադրային քաղաքականությանը, տեղեկատվական ռեսուրսների զարգացմանը, կառավարման արդյունավետության բարձրացմանը, ուսանողական ինքնավարության ընդլայնմանը և մի շարք այլ հարցերին վերաբերող ռազմավարության բազմաթիվ դրույթներ միաժամանակ ունեցել են հակակոռուպցիոն կարևոր ազդեցություն:

Հարկ է նշել, որ բուհական համակարգում կոռուպցիայի դեմ պայքարը կարևորվում է նաև պետական կառավարման մարմինների կողմից:

Ի կատարումն ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի և ՀՀ կրթության և գիտության նախարարի հանձնարարականի՝ ԵՊՀ-ում ռեկտորի հրամանով ձևավորվեց կոռուպցիոն երևույթների դեմ պայքարը համակարգող հանձնաժողով, իսկ ԵՊՀ գիտական խորհուրդը հաստատեց 2011-2012 թթ. «ԵՊՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագիրը»:

2010 թ.-ի դեկտեմբերի 30-ին ՀՀ կրթության և գիտության նախարարի 30.12.2010 թ.-ի N1806-Ա/Ք հրամանով հաստատվեց «Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի՝ 2011-2012 թվականների միջոցառումների համալիր ծրագիրը», որի նպատակն էր առավել արդյունավետ դարձնել կոռուպցիոն երևույթների դեմ պայքարը բուհական համակարգում:

Հաջորդող տարիների ընթացքում աշխատանքների շարունակությանն աջակցելու նպատակով ԵՊՀ ռեկտորի 22.02.2013 թ.-ի հրամանով ստեղծված հանձնաժողովը մշակեց և 30.05.2013 թ.-ի ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացրեց «ԵՊՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014 թթ. համալիր միջոցառումների ծրագիրը»:

Վերջինս ապահովում է նախորդ (2011-2012 թթ.) հակակոռուպցիոն ծրագրով նախանշված աշխատանքների բնականոն ընթացքը և հիմնված է այդ ծրագրի իրականացման ընթացքում ԵՊՀ-ի կողմից ձեռք բերված դրական փորձի վրա: ԵՊՀ՝ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014 թթ. համալիր միջոցառումների ծրագիրը, ըստ էության, ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի հետ համատեղ ամփոփում էր 2010-2014 թթ. Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն

երևույթների դեմ արդյունավետ պայքարի հիմնական գործողությունները: Փաստաթղթում արտացոլված են եղել համալսարանական միջավայրում գոյություն ունեցող կոռուպցիոն դրսևորումների դեմ նպատակային պայքարի հիմնական միջոցառումները, դրանց իրականացմամբ ակնկալվող ուղղակի արդյունքները, սահմանված են եղել պատասխանատու ստորաբաժանումները, պաշտոնատար անձինք և գործողությունների իրականացման ժամկետները:

ԵՊՀ հակակոռուպցիոն աշխատանքների մասին պարբերաբար ԵՊՀ գիտական խորհրդին և ԵՊՀ խորհրդին ներկայացվել են համապատասխան ծրագրերի կատարողականները: 2014 թ.-ի դեկտեմբերի 22-ին կայացած ԵՊՀ խորհրդի նիստում «ԵՊՀ ռեկտորի 2013/2014 ուստարվա գործունեության հաշվետու զեկույցում» որպես հավելված ներկայացվել է «ԵՊՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014 թթ. համալիր միջոցառումների ծրագրի կատարողական»-ը և այն հաստատվեց ԵՊՀ խորհրդի կողմից:

ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումների համապատասխան ծրագրերն ու հաշվետվությունները ներկայացված են ԵՊՀ պորտալի «Փաստաթղթեր» բաժնում ([doc.y-su.am](http://doc.y-su.am)):

## **Ծրագրի նպատակներն ու խնդիրները**

### **Ծրագրի նպատակները.**

Ծրագրի գլխավոր նպատակներն են ԵՊՀ-ում կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը և ԵՊՀ վարչական ու պրոֆեսորադասախոսական կազմի նկատմամբ շահառուների վստահության ամրապնդումը:

### **Ծրագրի խնդիրներն են.**

- Աջակցել ԵՊՀ ֆակուլտետներին և առանձնացված ստորաբաժանումներին հստակեցնելու հակակոռուպցիոն մշակույթը, կոռուպցիոն երևույթների նկատմամբ ձևավորել անհանդուժողականության մթնոլորտ, մշակել համապատասխան էթիկայի կանոններ:
- Կատարելագործել ներքին իրավական ակտերը, կառավարման ու վերահսկման մեխանիզմները՝ ապահովելով տարբեր գործընթացների առավել կանոնակարգված, թափանցիկ և հրապարակային ընթացքն ու հնարավորինս բացառելով գործառնությունների շահերի բախումը:
- Բարձրացնել ներհամալսարանական գործընթացների վերաբերյալ շահառուների իրազեկվածության մակարդակը, ապահովել համալսարանական լայն շրջանակների մասնակցությունը հակակոռուպցիոն միջոցառումների իրականացմանը, զարգացնել հետադարձ կապի մեխանիզմները:
- Բարձրացնել հակակոռուպցիոն միջոցառումների մոնիթորինգի արդյունավետությունն ու անկողմնակալությունը, ինչպես նաև իրականացվող աշխատանքների հրապարակայնությունն ու հաշվետվողականությունը:

- Վեր հանել շահերի բախման դրսևորումները և միջոցառումներ իրականացնել դրանց չեզոքացման ուղղությամբ:
- Իրականացնել «կոռուպցիա» երևույթի և դրա կանխարգելմանն ուղղված տարաբնույթ գիտահետազոտական ուսումնասիրություններ, կրթական (այդ թվում դասախոսների վերապատրաստման) ծրագրերում մշակել և ներդնել կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված դասընթացներ:

## **Հիմնական կոռուպցիոն ռիսկերը (կոռուպցիայի դրսևորումները) և հակակոռուպցիոն միջոցառումների ուղղությունները**

ԵՊՀ-ում առկա կոռուպցիոն ռիսկերը կարելի է պայմանականորեն բաժանել հետևյալ հիմնական խմբերի.

- **Գիտելիքի գնահատում.** ուսանողի գիտելիքի ոչ օբյեկտիվ գնահատում (դրամի, նյութական բարիքների, ծառայությունների դիմաց կամ միջնորդի օգնությամբ գնահատականի նշանակում և այլն),
- **Մուտք դեպի կրթական համակարգ.** բուհի կողմից իրականացվող ընդունելության գործընթացում դրսևորվող ոչ օբյեկտիվ մոտեցումներ,
- **Ուսանողի շարժունակություն.** ուսանողների տեղափոխումների, փոխանակումների, հեռացումների, վերականգնումների և այլ խնդիրների հետ կապված ոչ օբյեկտիվ մոտեցումներ,
- **Անձնակազմի կառավարում.** ԵՊՀ աշխատակիցների աշխատանքի ընդունման, պաշտոնական առաջխաղացման, վարչական վերահսկողության, մասնագիտական աճի և այլ խնդիրների հետ կապված ոչ իրավաչափ դրսևորումներ,
- **Համալսարանի ֆինանսական կառավարում.** գնումների գործընթացի կազմակերպման և այլ գործառույթների ոչ իրավաչափ իրականացում,
- **Համալսարանի տնտեսական կառավարում.** տնտեսական և օժանդակ ենթակառույցների շահագործման գործընթացների ոչ իրավաչափ իրականացում:

## Հակակոռուպցիոն հիմնական միջոցառումներ

Ծրագրի շրջանակներում նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնց իրականացման համար հանձնաժողովի կողմից սահմանվում են նաև համապատասխան, պատասխանատուներ և ժամկետներ:

### Սույն ծրագրով նախատեսվում են հետևյալ հիմնական միջոցառումները.

<i>N</i>	<i>Միջոցառման խնդիր</i>	<i>Միջոցառումների նկարագրություն</i>	<i>Ակնկալվող արդյունքներ</i>	<i>Պատասխանատուներ</i>	<i>Ժամկետ</i>
1.	Կրթական գործընթացում կոռուպցիոն ռիսկեր պարունակող գործընթացների թափանցիկության և հրապարակայնության ապահովում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում:	1.1 Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համակարգի կատարելագործում: 1.2 Քննական սենյակների տեսալսողական սարքերով համալրում: 1.3 Գրագոհության դեմ պայքարի մեխանիզմների կատարելագործում: 1.5 Առարկայական ծրագրերի վերանայում, ծրագրերի (այդ թվում քննական հարցաշարերի, գրականության ցանկի) տեղադրում ինտերնետային կայքում: 1.6 Քննական գործընթացին ՈԻԽ ներկայացուցիչների ներկայությունն ապահովող մեխանիզմների կանոնակարգում:	<ul style="list-style-type: none"> <li>• Կրթական ծրագրերի բովանդակության, առարկայական ծրագրերի, հարցաշարերի, գրականության և այլ նյութերի հասանելիության ապահովում:</li> <li>• Քննական գործընթացի արդյունքների հրապարակման միջոցառումների հետևողական իրականացում:</li> <li>• Գնահատման գործընթացի կատարելագործում, այդ թվում բողոքարկման արդյունավետ գործուն մեխանիզմի ապահովում:</li> <li>• Ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնակարգով և այլ իրավական ակտերով սահմանված ընթացակարգերի պահպանման նկատմամբ հսկողության ուժեղացում:</li> </ul>	Ս. Գրիգորյան Ռ. Մարկոսյան Հ. Ժամհարյան Ռ. Քարամյան	2015-2018 թթ.
2.	Կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողական մթնոլորտի ձևավորում,	2.1. Մշակել պրոֆետորադասախոսական անձնակազմի էթիկայի կանոններ: 2.2. ԵՊՀ ռեկտորատի անդամների հանդիպումներ ուսանողների հետ: 2.3. ԵՊՀ պաշտոնաթերթում կոռուպցիայի խնդիրներին նվիրված հրապարակումների իրականացում: 2.4. Տարբեր պաստառների,	<ul style="list-style-type: none"> <li>• Պրոֆետորադասախոսական անձնակազմի էթիկայի կանոնների սահմանում, դրանց արժեվորում և տարածում ԵՊՀ-ում:</li> <li>• Համալսարանականների շրջանում իրազեկվածության մակարդակի և բարեվարքության մոտիվացիայի բարձրացում:</li> </ul>	Ռեկտոր, պրոռեկտորներ, ԵՊՀ գիտական խորհրդին կից էթիկայի հանձնաժողով,  Կ. Գրիգորյան, Պ. Մուրադյան	2016 նոյեմբեր (2.1 կետի համար)  2015-2018 (2.2-2.4 կետերի համար)

		բուկլետների տպագրում և տարածում, էլեկտրոնային ռեսուրսների ստեղծում:		Ա. Ավետիսյան	
3.	Համալսարանականների իրազեկվածության մակարդակի բարձրացում	<p>3.1. Կրթական (այդ թվում՝ դասախոսների վերապատրաստման) ծրագրերում կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված դասընթացների մշակում և ներդրում:</p> <p>3.2. ԵՊՀ պորտալի «Փաստաթղթեր» բաժնի արդիականացում, ներքին իրավական ակտերի մասին պարզաբանումների ներկայացում ԵՊՀ պաշտոնաթերթում:</p> <p>3.3. Ներքին իրավական ակտերի վերաբերյալ ուսանողական ակտիվի իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված ուսուցողական դասընթացների իրականացում:</p> <p>3.4. Ուսանողների շարժունակության վերաբերյալ հնարավորինս մատչելի և պարզաբանված ուղեցույց-տեղեկանքի հրապարակում, տեղափոխությունների վերաբերյալ տեղեկությունների պարբերաբար հրապարակում:</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Կոռուպցիայի խնդիրները լուսաբանը միտված կրթական ծրագրերի փոփոխություններ կամ նոր կրթական ծրագրեր:</li> <li>• ԵՊՀ պորտալի «Փաստաթղթեր» նոր կայքի ստեղծում և գործարկում, իրավական ակտերի հասանելիության աստիճանի բարձրացում, դրանցից օգտվելու հմտությունների զարգացում:</li> <li>• Համալսարանի գործունեությունը կանոնակարգող տարբեր իրավական ակտերի, ներբուհական կարգերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում:</li> <li>• Ուսանողների տեղափոխումների, հեռացումների, միջազգային տարբեր ծրագրերում ուսանողների մասնակցության վերաբերյալ տեղեկատվության առավելագույն մատչելի աղբյուրների (այդ թվում ուղեցույցերի) առկայություն:</li> </ul>	<p>Ա. Գրիգորյան, Ռ. Մարկոսյան, Հ. Շամհարյան, Ժ. Ադասյան, Վ. Վարազյան, Ռ. Քարամյան, Մ. Մալխասյան, Ֆակուլտետներ</p>	<p>2017 թ. սեպտեմբեր (3.1 կետի համար)</p> <p>2015 թ. հոկտեմբեր (3.2 կետի համար)</p> <p>2015-2018 (3.3 կետի համար)</p> <p>2017 թ. մայիս (3.4 կետի համար)</p>
4.	Կոռուպցիոն ռիսկեր պարունակող ներբուհական իրավական ակտերի կատարելագործում	<p>4.1. ԵՊՀ ներքին կարգապահական կանոնների մշակում և ընդունում (նոր խմբագրությամբ):</p> <p>4.2. ԵՊՀ ներքին իրավական ակտերի լրամշակում և համապատասխանեցում հակակոռուպցիոն ռազմավարության խնդիրներին:</p> <p>4.3. Ուսանողների կողմից տարբեր խնդիրներով վարչական աշխատակազմին դիմելու ընթացակարգերի ուղեցույցի մշակում և գործընթացի արդյունավետության բարձրացում:</p>	<ul style="list-style-type: none"> <li>• ԵՊՀ ներքին կարգապահական կանոնների (նոր խմբագրությամբ) ընդունում ԵՊՀ գիտական խորհրդի կողմից:</li> <li>• Ներքին իրավական ակտերի վերանայման աշխատանքների ժամանակացույց, դրանց կիրառման արդյունավետության և բացահայտված թերությունների մոնիթորինգ, գործող իրավական ակտերի փոփոխված և լրացված տարբերակների ընդունում:</li> <li>• Ուսանողների կողմից տարբեր խնդիրներով վարչական աշխատակազմին դիմելու ընթացակարգերի ուղեցույց,</li> </ul>	<p>Պրոռեկտորներ, ԵՊՀ իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողով</p> <p>Ա. Թադևոսյան</p>	<p>2015 թ. հուլիս (4.1 կետի համար)</p> <p>2015-2018 (4.2 կետի համար)</p> <p>2017 թ. հունիս (4.3 կետի համար)</p>

5.	Համալսարանում իրականացվող ընդունելության գործընթացի վերահսկողություն	<p>5.1. Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի տեղերի հատկացման հարցի քննարկում ռեկտորատում:</p> <p>5.2. Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ընդունելության գործընթացի վերահսկողության մեխանիզմների կատարելագործում:</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի տեղերի հատկացման գործընթացի հրապարակայնության ապահովում:</li> <li>• Մահմանված ընթացակարգերի պահպանմանն ուղղված վերահսկողության իրականացում, վերահսկողության նոր մեխանիզմների մշակում և ներդրում:</li> </ul>	Ռեկտոր, պրոռեկտորներ	2015-2018թթ.
6.	Հակակոռուպցիոն միջոցառումներում ուսանողների մասնակցության խթանում	<p>6.1. Ուսանողական ակտիվի (հանձնաժողովների, գիտական խորհրդի, հոգաբարձուների խորհրդի, նախագահության և ՈԻԽ այլ անդամների) համար ուսուցողական դասընթացների կազմակերպում հակակոռուպցիոն արդյունավետ աշխատանքների վերաբերյալ:</p> <p>6.2. Ուսանողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկատվական թերթիկների տարածում, հրապարակումների իրականացում:</p> <p>6.3. Ուսանողների կողմից հակակոռուպցիոն ծրագրերում հաջողված փորձի ներկայացում ԵՊՀ տպագիր և էլեկտրոնային միջոցներում:</p> <p>6.4. «Ուղիղ կապ ՈԻԽ-ի հետ» առցանց գործիքի շահագործում:</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ուսանողական կառույցների արդյունավետ հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման կարողությունների զարգացում:</li> <li>• Ուսանողների իրավունքների և պարտականությունների իրազեկվածության մակարդակի բարձրացում:</li> <li>• Հակակոռուպցիոն ծրագրերում ուսանողների հաջողված փորձի ներկայացում:</li> </ul>	Ռ. Մարկոսյան Վ. Վարազյան, Ռ. Քարամյան,  Կ. Գրիգորյան	2015-2018թթ.  2015 թ. նոյեմբեր (6.4 կետի համար)
7.	Համալսարանում կառավարման գործընթացի կատարելագործում	<p>7.1. Պրոֆեսորադասախոսական և գիտական համակազմի պաշտոնների մրցույթների իրականացում, մրցույթի վերաբերյալ լայն հրապարակայնության ապահովում, մրցույթների ընթացքում սուբյեկտիվ գործոնների ազդեցության նվազեցում, մրցակցային գործընթացի խրախուսում:</p> <p>7.2. ԵՊՀ վարչական,</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Պրոֆեսորադասախոսական և գիտական համակազմի պաշտոնների տեղակալման կանոնակարգերով նախատեսված մրցույթների պարբերական կազմակերպում, առկա թափուր տեղերի մրցակցային համալրման գործընթաց:</li> <li>• Վարչական և այլ պաշտոնների աշխատանքների նկարագրության և զբաղեցրած պաշտոնի համապատասխան-</li> </ul>	Ռեկտոր, Պրոռեկտորներ, Կադրերի բաժին, Գիտակազմակերպական բաժին, Ա. Առուստամյան, Ա. Հոհաննիսյան, Ա. Ավետիսյան	2015-2018 (7.1, 7.3, 7.4, 7.5 կետերի համար)

		<p>ուսումնաստանողակ, ինժեներատեխնիկական և օժանդակ պաշտոնների համակարգի և իրավասությունների սահմանման կարգի և աշխատողների մասնագիտական համապատասխանության որոշման կարգի ընդունում:</p> <p>7.3. Թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունների հրապարակում, համապատասպան մրցութային կարգի համաձայն աշխատողի ընտրության իրականացում:</p> <p>7.4. Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի կատարելագործում:</p> <p>7.5. Գնումների, ֆինանսական կառավարման, տնտեսական աշխատանքների արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:</p> <p>7.6. Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրման աշխատանքների իրականացում:</p>	<p>նությունը ապահովող համակարգի ներդրում,</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ոչ ակադեմիական համակազմի աշխատակիցների ընտրության մրցութային գործընթացի և օբյեկտիվության ապահովում:</li> <li>• Օրենսդրությամբ սահմանված գնումների գործընթացի իրականացում և հրապարակայնության ապահովում:</li> <li>• Ֆինանսական կառավարման, ենթակառուցվածքների աշխատանքների հաշվետվողականության բարձրացում:</li> <li>• Ներհամալսարանական կառավարման ընթացակարգերի կատարելագործմանն ու էլեկտրոնային կառավարման և փաստաթղթաշրջանառության համակարգերի զարգացմանն ուղղված աշխատանքների իրականացում:</li> </ul>		<p>2016 թ. մարտ (7.2 կետի համար)</p> <p>2016 թ. սեպտեմբեր (7.6 կետի համար)</p>
8.	Շահերի բախման երևույթների բացահայտում և երևույթների չեզոքացում	<p>8.1. Համալսարանում շահերի բախման երևույթների վերաբերյալ ուսումնասիրության իրականացում:</p> <p>8.2. Հնարավոր շահերի բախման դրսևորումների բացահայտման և չեզոքացման ուղեցույցի մշակում:</p> <p>8.3. Ներբուհական իրավական ակտերի վերանայում՝ շահերի բախմանը վերաբերող դրույթները բացառելու նպատակով:</p> <p>8.4. «Շահերի բախում» (այդ թվում՝ գործառույթային շահերի բախում)</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Համալսարանում շահերի բախման երևույթների վերաբերյալ ուսումնասիրության արյունքների հրապարակում:</li> <li>• Շահերի բախման դրսևորումների էության, դրանց չեզոքացման հնարավոր տարբերակների վերաբերյալ ուղեցույցի հրապարակում:</li> <li>• Շահերի բախում պարունակող ներբուհական իրավական ակտերի վերանայված տարբերակի ընդունում:</li> </ul>	Ռեկտոր, Պրոռեկտորներ, ԵՊՀ իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողով, Ա. Մարգարյան	2017-2018թթ..



		հասկացության ընդգրկում համալսարանում կոռուպցիոն ռիսկերի ու երևույթների բացահայտման և չեզոքացման գործընթացներում, հնարավոր շահերի բախման երևույթների չեզոքացում:			
9.	Կոռուպցիայի և դրա կանխարգելման ուղղված տարաբնույթ գիտահետազոտական ուսումնասիրությունների իրականացում, միջազգային փորձի ուսումնասիրություն	9.1. Կոռուպցիայի երևույթի և դրա կանխարգելման խնդիրների վերաբերյալ ուսումնասիրությունների, այդ թվում՝ ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների կողմից միջոցառումների հետազոտությունների իրականացում, ավարտական թեզերի մշակում: 9.2. Հակակոռուպցիոն խնդիրներով զբաղվող տարբեր միջազգային կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի իրականացում: 9.3. Արտերկրի փորձագետների մասնակցությամբ սեմինարների, խորհրդակցությունների, հանդիպումների և այլ միջոցառումների իրականացում:	<ul style="list-style-type: none"> <li>• Կոռուպցիայի երևույթի և դրա կանխարգելման խնդիրների վերաբերյալ գիտահետազոտական ուսումնասիրությունների հրատարակում:</li> <li>• Հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման գործընթացում առաջատար միջազգային փորձի կիրառում՝ տարբեր միջազգային կազմակերպությունների աջակցությամբ:</li> <li>• Բուհերում բարեվարքության քաղաքականության արդի միջազգային փորձի ներդրում:</li> </ul>	Ռեկտոր, Պրոռեկտորներ, Ֆակուլտետներ	2017-2018 թթ.
10.	Աշխատողների աշխատավարձերի բարձրացում	10.1 Բարձրացնել համալսարանի աշխատողների աշխատավարձերը՝ պաշտոնական գնաճից առաջանցիկ տեմպերով:	<ul style="list-style-type: none"> <li>• Բարձրացնել աշխատակիցների աշխատավարձերը:</li> </ul>	Ռեկտոր, Պրոռեկտորներ, Ա. Ավետիսյան	2017-2018 թթ.
11.	Հակակոռուպցիոն միջոցառումների արդյունքների մոնիթորինգ, ուսանողների հետ հետադարձ կապի ապահովում	11.1. Ուսանողների և շրջանավարտների շրջանում հարցումների (այդ թվում՝ առցանց) իրականացում: 11.2. Ուսանողների և շրջանավարտների հարցումների գործընթացի կատարելագործում: 11.3. «Ռեկտորատի հետ ուղիղ էլ. կապ» գործիքի ներդրում: 11.4. Ֆակուլտետների ղեկնատների և	<ul style="list-style-type: none"> <li>• Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական, և ԵՊՀ-ում ստացված կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների առցանց հարցումների իրականացում, դրանց կատարելագործում,</li> <li>• Ուսանողների հետ արդյունավետ հետադարձ կապի ապահովում:</li> <li>• Դասախոսների, ուսանողների</li> </ul>	Ա. Գրիգորյան, Ռ. Մարկոսյան, Հ. Ժամհարյան, Ա. Բուդաղյան, Ա. Ավետիսյան, Վ. Վարազյան, Ա. Մկրտչյան, Ռ. Քարամյան, Ֆակուլտետներ	2015-2018 թթ.

		<p>ամբիոնների կողմից իրականացվող ուսումնական գործընթացի վերլուծության աշխատանքների իրականացում՝ ըստ սահմանված ժամանակացույցերի և ընթացակարգերի, վերոհիշյալ աշխատանքների արդյունավետության բարձրացում:</p> <p>11.5. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի շրջանում կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ սոցիոլոգիական փորձնական ուսումնասիրության իրականացում:</p> <p>11.6. Ուսանողական կառույցների կողմից ուսանողների փորձնական հարցման իրականացում, արդյունքների վերլուծություն և հրապարակում:</p>	<p>շրջանում տարբեր հարցումների և ուսումնասիրությունների իրականացում և արդյունքների հրապարակում, այդ թվում՝ անկախ մասնագետների խորհրդատվությամբ:</p>		
--	--	--	---	--	--